

1.	09.11.11	828-Ն	ԼՂՀ կառավարության 2003թ. ապրիլի 15-ի «Պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման կարգ հաստատելու մասին» թիվ 99 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին	<a href="#">april15N99.</a>
----	----------	-------	---	-----------------------------



# ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2003թ.

N 99

ք.Ստեփանակերտ

### Պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման կարգը հաստատելու մասին

Պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման գործընթացը կանոնակարգելու, այդ բնագավառում համապատասխան պետական մարմինների հսկողությունը ուժեղացնելու նպատակով ԼՂՀ կառավարությունը որոշում է.

Հաստատել պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման կարգը (կցվում է):

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

2003թ. \_\_\_\_\_ «\_\_\_»-ի

թիվ \_\_\_\_\_ որոշմամբ

## Կ Ա Ր Գ

### Պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման

1. Պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող, համայնքային սեփականություն հանդիսացող ծառերից հատման ենթակա են միայն չորացած, հիվանդ, ինչպես նաև համայնքում բարեկարգման կամ շինարարական աշխատանքներին խոչընդոտող ծառերը:

2. Ծառերի հատումը իրականացվում է միայն ԼՂՀ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից տրված համապատասխան թույլտվության առկայության դեպքում:

3. Թույլտվության տրման հիմք է հանդիսանում համայնքի ավագանու որոշումը՝ հատումը իրականացնելու վերաբերյալ, որին կցվում է ծառի (ծառերի) վիճակի և հատման պատճառների մասին ակտը: Ակտը կազմում է համայնքի ղեկավարի կողմից ստեղծված հանձնաժողովը, որի կազմի մեջ ներգրավվում են համայնքի անդամներ, համապատասխան մասնագետներ:

4. Համայնքի սեփականությունը հանդիսացող հատված ծառերի փայտանյութը ոչ համայնքի կարիքների համար օգտագործելու դեպքում հատողը համայնքային բյուջե մուծում է փոխհատուցում, որի նվազագույն գումարը պետք է հավասար լինի հատած ծառից (ծառերից) ստացվող վառելի- կամ շինանյութի արժեքի՝ համապատասխան գնացուցակի համաձայն, և մեկ հատած ծառի դիմաց երեք նույն ցեղին\* պատկանող ծառերի աճեցման ծախսերի հանրագումարին:

5. Ծառերի աճեցման համար գանձվելիք գումարը որոշվում է համայնքի ավագանու կողմից, բայց ոչ պակաս, քան 1500 դրամ մեկ ծառի համար՝ համայնքի ղեկավարի և գնորդի միջև կնքված պայմանագրի համաձայն:

6. Ծառերի հատման դիմաց համայնքային բյուջե մուտքագրված գումարների և նրանց ծախսման ուղղությունների մասին հաշվետվությունը կազմվում է առանձին: Բացի դրանից, յուրաքանչյուր տարվա վերջում ծառերի աճեցման համար համապատասխան փոխհատուցում ստացած համայնքները ԼՂՀ շրջակա միջավայրի և

բնական ռեսուրսների վարչություն հաշվետվություն են ներկայացնում այդ ուղղությամբ իրականացրած աշխատանքների վերաբերյալ:

7. Համայնքների տարածքներից դուրս, բայց շրջանի վարչական տարածքում գտնվող ծառերի հատումը իրականացվում է շրջանի վարչակազմի նախաձեռնությամբ՝ սույն կարգի 1-5 կետերի պահանջներին համաձայն:

8. Համայնքների տարածքում (բացի տնամերձից) և նրանցից դուրս գտնվող, պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող, քաղաքացիների սեփականությունը հանդիսացող ծառերի հատումը իրականացվում է սեփականատերերի նախաձեռնությամբ, ԼՂՀ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության համաձայնության առկայության դեպքում:

---

\* այս դրույթը վերաբերում է ԼՂՀ վարչապետի 2000թ. սեպտեմբերի 2-ի թիվ 274 որոշման մեջ նշված հետևյալ ծառատեսակներին՝ ընկուզենի հունական, արջատխլենի, կենի հատապտղային, գիհի, սոսի արևելյան, թղկի հսկայական, թաղարնի, շագանակենի, տանձենի: